

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ
ՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Երևան-2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ մեթոդական ուղեցույցի և դրա կիրառության վերաբերյալ.....4
 Ուղեցույցի մշակման օրենսդրական հիմքերը7
 «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով սահմանված և ուղեցույցում օգտագործվող հիմնական հասկացությունները8
 Համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերը11
 Արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմինը.....11
2. ՀՀ համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի կազմակերպման և վարման ներկա վիճակը, առկա խնդիրները.....11
3. Օրենսդրությամբ համայնքի ՏԻՄ-երին արխիվային գործի կազմակերպման և վարման բնագավառում վերապահված հիմնական լիազորությունները և գործառույթները, «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ում, համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարման կազմակերպումը և իրականացումը16
 Համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման, լուծարման գործընթացի կազմակերպումը և իրականացումը.....17
 Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային այլ հիմնարկների և կազմակերպությունների արխիվների ստեղծումը18
 Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու գործընթացի կազմակերպումը և իրականացումը19
 Համայնքային հիմնարկի, կազմակերպության փորձագիտական հանձնաժողովի ստեղծումը, հանձնաժողովի իրավասությունները21
 Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորումը23
 Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների էլեկտրոնային փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորումը26
 Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի կարգավորումը (գիտատեխնիկական մշակումը)27
 Համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի մշտական պահպանությունը, փաստաթղթերի ժամանակավոր պահպանության (մինչև մշտական պահպանության հանձնելը) ժամկետները30
 «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվների կողմից քաղաքացիներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին, իրավաբանական անձանց

տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի), տրամադրումը, արխիվային ծառայությունների մատուցումը	32
Համայնքային արխիվների համալրման աղբյուրները	33
«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի համալրման կազմակերպումը	35
«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի հաշվառման կազմակերպումը	36
«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի պահպանության կազմակերպումը	37
Փաստաթղթերի պահպանությունն համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում	37
«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի օգտագործման կազմակերպումը	38
Լուծարված համայնքային հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի պահպանության ընդունումը	39
Համայնքային արխիվների փոխհամագործակցությունը համալրման աղբյուրների հետ.....	41
Միավորված (խոշորացված) համայնքների արխիվային գործերի կառավարումը բնակավայրերում.....	42
Համայնքապետարանի աշխատակազմի արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրին վերաբերող դրույթներ	43
4. Առաջարկություններ համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարման առկա խնդիրների լուծման վերաբերյալ	44
Հավելված 1.«----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձև	47
Հավելված 2.«----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձև.....	64
Հավելված 3.«----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձև.....	69
Հավելված 4.Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձև.....	72

Հավելված 5. Համայնքապետարանի աշխատակազմի ՓՀ ստեղծելու համայնքի ղեկավարի կարգադրության նախագծի օրինակելի ձև	76
Հավելված 6. Համայնքապետարանի կարիքների համար արխիվային փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագրի նախագծի օրինակելի ձև	78
Հավելված 7. Համայնքապետարանի աշխատակազմի արխիվային գործի վարման գծով գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրի նախագծի օրինակելի ձև.....	88

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԵՎ ԴՐԱ

ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սույն մեթոդական ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) նախատեսված է Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ-եր), համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ համայնքային հիմնարկներ և կազմակերպություններ) արխիվային գործի վարման համար պատասխանատու պաշտոնատար անձանց, ինչպես նաև համայնքի կառավարման և զարգացման հարցերով զբաղվող մասնագետների համար և կարող է խթան հանդիսանալ համայնքների արխիվային գործի կազմակերպման և կայուն կառավարման գործընթացների ապահովման համար:

Ուղեցույցի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքային սեփականություն հանդիսացող փաստաթղթերի կառավարման (համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման) հետ կապված իրավահարաբերությունները սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության գործող կարգավորումների համատեքստում ներկայացնել համայնքների ՏԻՄ-երի կողմից համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի կառավարման գործընթացները կազմակերպելու և իրականացնելու իրավական քայլերն ու գործողությունները:

Ուղեցույցը նպատակ ունի նաև համայնքի արխիվային գործի վարման մասին գիտելիքների ընդլայնման և հաղորդման միջոցով նպաստելու և զարգացնելու ՀՀ համայնքների արխիվային գործի վարման պատասխանատուների գիտելիքներն ու

կարողությունները՝ համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի կառավարման վերաբերյալ:

Ուղեցույցում ներկայացվել են.

- Օրենսդրությամբ համայնքի ՏԻՄ-երին արխիվային գործի կազմակերպման և վարման բնագավառում վերապահված հիմնական լիազորությունները և գործառույթները.
- «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ում, համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարման կազմակերպումը և իրականացումը.
- ՀՀ համայնքապետարանների աշխատակազմերում, համայնքային այլ հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի կազմակերպման և վարման ներկա վիճակը և առկա խնդիրները.
- «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու գործընթացներում համայնքի ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումների շրջանակը.
- համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվների արխիվային փաստաթղթերի կառավարման գործընթացի հետ կապված լիազորությունները և գործառույթների իրականացման ընթացակարգերը.
- ՏԻՄ-երի քայլերն ու գործողությունները համայնքի արխիվային գործի վարման և կայուն կառավարման գործընթացներում.
- համայնքի ՏԻՄ-երի իրավունքներն ու պարտականությունները՝ արխիվային գործի կազմակերպման և վարման հետ կապված իրավահարաբերություններում.
- համայնքային արխիվի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվների արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները.
- համայնքային արխիվից, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներից քաղաքացիներին, իրավաբանական

անձանց, վարչական մարմիններին տեղեկատվության ու փաստաթղթերի տրամադրման կարգն ու պայմանները.

- միավորված (խոշորացված) համայնքների արխիվային գործերի կառավարումը բնակավայրերում.
- առաջարկություններ՝ համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարման առկա խնդիրների լուծման վերաբերյալ:

**Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության համայնքների ՏԻՄ-երին՝
Ուղեցույցն ընդունել ի դեկավարումն:**

1.1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ուղեցույցի մշակման օրենսդրական հիմքեր են հանդիսացել՝

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը,
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը,
- «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը,
- «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը,
- «Գնումների մասին» ՀՀ օրենքը:
- ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 7-ի «Արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի իրավասություններ վերապահելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-Ն և նոյեմբերի 27-ի N 1549-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 937-Ն որոշումը,
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մարտի 13-ի «Պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների փորձագիտական հանձնաժողովների և արխիվների օրինակելի կանոնակարգերը հաստատելու մասին» N 03-Ն հրամանը:

1.2. «ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում սահմանված և Ուղեցույցում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- **արխիվային գործ՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեությունն է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման բնագավառում.

- **փաստաթուղթ՝** նյութական կրիչի վրա գրառված տեղեկությունն է՝ վավերապայմաններով, որոնք թույլ են տալիս այն նույնականացնել.

- **արխիվային փաստաթուղթ՝** պետության և հասարակության համար պատմամշակութային ու փաստավավերագրական նշանակությամբ պահպանության ենթակա՝ նյութական կրիչի վրա գրանցված վավերապայմաններով տեղեկությունն է, որը թույլ է տալիս դա նույնականացնել.

- **արխիվային այլ փաստաթղթեր՝** Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ չմտնող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանվող արխիվային փաստաթղթերն են.

- **անձնակազմին վերաբերող փաստաթղթեր՝** գործատուի հետ քաղաքացիների աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի և աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերն են.

- **մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր՝** ֆիզիկական անձի առողջական վիճակի, ընտանեկան և նեղ անձնական հարաբերությունների, ծննդյան, որդեգրման, ամուսնության և ամուսնալուծության հանգամանքների, անձնական տվյալների, անձնական գրագրության և թղթակցության, նոտարական գործարքների, գույքային իրավունքի, եկամտի աղբյուրների մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը.

- **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթուղթ՝** հայ ժողովրդի նյութական և հոգևոր կյանքն արտացոլող, գիտապատմական, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային նշանակություն ունեցող՝ փորձաքննությամբ արժեքավորված, պետության կողմից հաշվառված և մշտական պահպանության ենթակա արխիվային փաստաթուղթ (այդ թվում՝ էլեկտրոնային).

- **արխիվ**՝ իրավաբանական անձ կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկի կամ կազմակերպության, իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող միավոր, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) համալրում, հաշվառում, պահպանում և օգտագործում մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը.

- **պետական արխիվ**՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծում է պետությունը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման, ինչպես նաև գիտական, մշակութային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

- **համայնքային արխիվ**՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծում է համայնքը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով.

- **արխիվային փաստաթղթերի մշտական պահպանություն**՝ արխիվային փաստաթղթերի պահպանությունն է՝ առանց պահպանության ժամկետի սահմանման.

- **արխիվային փաստաթղթերի ժամանակավոր՝ կարճաժամկետ և երկարաժամկետ, պահպանություն**՝ արխիվային փաստաթղթերի պահպանությունն է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում.

- **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ավանդատվական պահպանություն**՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունն է պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

- **արխիվային փաստաթղթերի պահատվությամբ պահպանություն**՝ արխիվային փաստաթղթերի պահպանությունն է պետական կամ համայնքային արխիվներում

դրանց սեփականատերերի հետ՝ համապատասխան պայմանագրով սահմանված որոշակի ժամկետում և պայմաններով.

- **արխիվային փաստաթղթերի սեփականատեր՝** Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքը, իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որն ունի արխիվային փաստաթղթերի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունք.

- **արխիվային փաստաթղթերից օգտվող՝** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը, սահմանված կարգին համապատասխան, օգտվում է արխիվային փաստաթղթերից իրեն անհրաժեշտ տեղեկությունն ստանալու և օգտագործելու նպատակով.

- **արխիվի համալրման աղբյուր՝** պետական կամ համայնքային արխիվներին արխիվային փաստաթղթեր և նյութական կրիչի վրա այլ տեղեկություններ հանձնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

- **տեղեկատու-որոնողական միջոցներ՝** արխիվային փաստաթղթերի բովանդակությանը վերաբերող տեղեկատվության և դրանց որոնման ապահովման նպատակով կազմված փաստաթղթերի ամբողջություն:

1.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերն են՝

- 1) տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը.
- 2) իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ համայնքին որպես սեփականություն հանձնած արխիվային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

1.4. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Համայնքների ՏԻՄ-երին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվային գործի վարման համար պատասխանատու պաշտոնատար անձանց առաջարկվում է **ընդունել ի գիտություն**, որ Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի իրավասությունները ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 7-ի «Արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի իրավասություններ վերապահելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-ն և նոյեմբերի 27-ի N 1549-ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 937-Ն որոշմամբ¹ վերապահվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

2.ՀՀ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ, ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուղեցույցը մշակելիս ՀՀ համայնքապետարանների աշխատակազմերում, համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի կազմակերպման և վարման ներկա վիճակը, առկա խնդիրները պարզելու և կարիքների գնահատում իրականացնելու ուսումնասիրություն անցկացնելու նպատակով՝ կազմվել էր հարցաշար: 15 հարցերից և 10 ենթահարցերից կազմված հարցաշարը լրացվել է 25 համայնքապետարանների աշխատակազմերի արխիվային գործի վարմանն առնչություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից:

¹ Տե՛ս <https://www.arlis.am>

Ընտրանքային կարգով կատարված 25 համայնքապետարանների աշխատակազմերի ընտրության ժամանակ ցանկում ընդգրկվել են 2015 թվականի ընթացքում փորձնական միավորված 3, 2016-2021 թվականների ընթացքում միավորված 18, ինչպես նաև չմիավորված 4 համայնքները, հաշվի առնելով այդ համայնքների համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների քանակները, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների քանակները, բնակչության թվաքանակները և միավորված համայնքների բնակավայրերի թիվը:

Հարցաշարի հարցերի պատասխանների ուսումնասիրությունից պարզվել է, որ՝

- Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման պահից, դեռևս որևէ համայնքում, «Համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ) չի ստեղծվել.
- համայնքներում արխիվային գործի վարման կազմակերպման և կառավարման համակարգված աշխատանքները թերի են իրականացվել, իրավակազմակերպչական առումով արխիվային գործի վարման կառավարում գրեթե չի իրականացվել և չի ապահովվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ամբողջական իրականացումը.
- որոշ համայնքապետարանների աշխատակազմեր նպատակահարմար են համարել քննարկել համայնքում «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ –ի ստեղծումը.
- մեծամասամբ համայնքապետարանների աշխատակազմերում արխիվային գործի վարման գործառույթները իրականացնում են միայն աշխատակազմերի քարտուղարները.
- համայնքապետարանների աշխատակազմերից ոչ մեկում չկան արխիվային գործ (արխիվագետ) մասնագիտությամբ համայնքային ծառայողներ.
- համայնքապետարանների աշխատակազմերը արխիվային գործի վարման աշխատանքները պատշաճ կերպով իրականացնելու համար մեծամասամբ չունեն բավարար քանակի մարդկային ռեսուրսներ, մասնագիտական կարողություններ և ունակություններ.
- համայնքների համայնքային հիմնարկներում (բացի «Համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) և

կազմակերպություններում արխիվային գործը հիմնականում վարում են տնօրենները կամ գործավարները կամ հաշվապահները, որոնք ևս չունեն բավարար քանակի մարդկային ռեսուրսներ, մասնագիտական կարողություններ և ունակություններ.

- բոլոր համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողները վերջին 5 տարիների ընթացքում չեն մասնակցել արխիվային գործի վարման կազմակերպման թեմայով վերապատրաստման որևէ դասընթացի.
- համայնքապետարանների աշխատակազմերը մեծամասամբ չունեն աշխատակազմի արխիվային փաստաթղթերի պահպանության համար այդ նպատակով կահավորված արխիվապահոց.
- համայնքապետարանների աշխատակազմերի արխիվապահոցները գրեթե չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ սահմանված պայմանների պահանջներին.
- 2015-2023 թվականների ընթացքում համայնքապետարանների աշխատակազմերի (միավորված (խոշորացված) համայնքների դեպքում՝ միավորված համայնքի կազմում ներառված նախկին համայնքների աշխատակազմերի) գերակշիռ մեծամասնությունը համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքները որպես պետական սեփականություն չեն փոխանցել:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքները որպես պետական սեփականություն փոխանցվել են առանց ավագանու որոշման, խախտելով «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ն մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ համայնքի ավագանին է որոշում կայացնում համայնքային սեփականություն համարվող արխիվային

փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության.

- Համայնքապետարաններում արխիվապահոց չունենալու, համայնքապետարանի վարչական շենքում համապատասխան տարածքի բացակայության, ինչպես նաև բնակավայրերում բնակիչներին (կարիքն առաջանալու դեպքերում) ավելի արագ ծառայություն մատուցելու պատճառներով պայմանավորված՝ միավորված համայնքների կազմում ներառված նախկին համայնքների «Համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի արխիվային փաստաթղթերը որպես պետական սեփականություն չփոխանցված փաստաթղթերը հիմնականում պահպանվում են վարչական ղեկավարների նստավայրերում.
- 2015-2023 թվականների ընթացքում համայնքային ենթակայության հիմնարկների (բացի «Համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) և կազմակերպությունների համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքները գրեթե չեն փոխանցվել որպես պետական սեփականություն.
- 2015-2023 թվականների ընթացքում համայնքապետարանների (միավորված համայնքների դեպքում՝ միավորված համայնքի կազմում ներառված նախկին համայնքապետարանների) աշխատակազմերը փաստաթղթերի կարգավորումը (գիտատեխնիկական մշակումը) իրականացրել են պայմանագրային հիմունքներով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ համայնքապետարանների աշխատակազմերի, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման միջոցով:
- որոշ համայնքների ավագանիներ 2023 թվականին համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարի տեսակ չեն սահմանել.
- համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար համայնքների ավագանիների կողմից

սահմանված փոխհատուցման վճարի դրույքաչափերը կազմել են **25 ՀՀ դրամից** մինչև **2000 ՀՀ դրամ**.

- **2022** թվականի ընթացքում համայնքապետարանների աշխատակազմերի արխիվներից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար որպես տեղական վճար համայնքների բյուջեներ գումարներ են մուտքագրել շատ քիչ համայնքներ:

Ուսումնասիրության արդյունքում վերոնշյալ **25** համայնքապետարանների աշխատակազմերում, համայնքային ենթակայության այլ հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի կազմակերպման և վարման առկա խնդիրներն են՝

- համայնքապետարանների աշխատակազմերում արխիվային գործի վարման մասնագիտական հմտությունների և կարողությունների ցածր մակարդակը,
- արխիվային գործի վարման գործող օրենսդրական և հատկապես ենթաօրենսդրական իրավական ակտերի պահանջների չիմացությունը,
- «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ների բացակայությունը,
- համայնքապետարանների աշխատակազմերում արխիվային գործ (արխիվագետ) մասնագիտությամբ համայնքային ծառայողների բացակայությունը,
- համայնքապետարանների գերակշիռ մասում արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող առանձին համայնքային ծառայողի հաստիքային միավորի բացակայությունը,
- արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում արխիվային գործի վարման գործառույթների չներառումը կամ ոչ ամբողջական ներառումը,
- արխիվապահոցների համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան պայմանների, չափանիշների և շենքային պայմանների, անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների գրեթե բացակայությունը,
- որոշ համայնքներում արխիվապահոցների բացակայությունը,
- ՏԻՄ-երի կողմից արխիվային գործի կազմակերպման և վարման օրենսդրական կարգավորումների խոչընդոտները, սահմանափակումները և ոչ լիարժեքությունը,

- արխիվային գործի վարման մասնագիտական վերապատրաստումների չկազմակերպումը,
- համայնքների բյուջեների սուղ ֆինանսական միջոցների առկայությունը և համայնքապետարանի կարիքների համար գործերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման բարձր գները:

Հարկ է նշել, որ ուսումնասիրության արդյունքներով փաստվել է, որ մեծամասամբ համայնքների ՏԻՄ-երի կողմից համայնքներում արխիվային գործի վարման կազմակերպման և կառավարման համակարգված աշխատանքները թերի են իրականացվել, իրավակազմակերպչական առումով արխիվային գործի վարման կառավարում գրեթե չի իրականացվել և չի ապահովվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ամբողջական կատարումը:

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՄ-ԵՐԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-ՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված է համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում, որի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը **կազմակերպում է** համայնքի արխիվային գործի վարումը:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն**, որ՝ օրենքով սահմանված վերոնշյալ իրավանորմից բխում է, որ համայնքի ղեկավարը համայնքի արխիվային գործի վարումը **կազմակերպում է ոչ միայն** համայնքապետարանի աշխատակազմում, այլև համայնքային բոլոր հիմնարկներում և կազմակերպություններում:

Համայնքների ղեկավարներին, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն**, որ համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարումը

ապահովում են համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարները, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքապետարանի աշխատակազմի արխիվային գործի վարումը ապահովում է աշխատակազմի քարտուղարը:

Համայնքի ղեկավարի վերոնշյալ լիազորության իրականացման նպատակով «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են արխիվային գործի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, համաձայն որի՝

1. Համայնքի ավագանին՝

1) որոշում է կայացնում համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

2) որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

2. Համայնքի ղեկավարը՝

1) ներկայացնում է ավագանու հաստատմանը համայնքային արխիվ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման նախագիծը.

2) ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

3. Համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

3.1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Օրենսդրությամբ համայնքի ՏԻՄ-երին համայնքի արխիվային գործի կազմակերպման և վարման նպատակով վերապահված լիազորությունների համատեքստում՝ համայնքային արխիվ ստեղծելու մասին որոշման նախագիծը համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու հաստատմանը և համայնքի ավագանին՝ **պետք է ընդունի համայնքային արխիվ ստեղծելու** մասին որոշումը և համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերը պետք է

հանձնվեն համայնքային արխիվ **կամ պետք է որոշի՝** համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

Համայնքների ՏԻՄ-երին **առաջարկվում է քննարկել** «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ ստեղծելու հնարավորության և նպատակահարմարության հարցը:

Համայնքների ղեկավարներին, **առաջարկվում է ընդունել ի գիտություն**, որ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ ստեղծելու դեպքում, իրենք պետք է ապահովեն համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ ստեղծելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևը ներկայացված է **հավելված 1-ում**:

«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի վերակազմակերպման, լուծարման դեպքերում ևս համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշումները պետք է կայացնի համայնքի ավագանին:

Ուղեցույցում ներկայացված է նաև արդեն իսկ ստեղծված «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանու որոշումների նախագծերի օրինակելի ձևերը ներկայացված են **2-րդ և 3-րդ հավելվածներում**:

3.2. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՅԼ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները, իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը **պարտավոր են ստեղծել արխիվ**, այլ իրավաբանական անձինք, նոտարներն ու անհատ ձեռնարկատերերն իրենք են որոշում իրենց գործունեության ընթացքում առաջացած արխիվային փաստաթղթերի պահպանության տարբերակը մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կամ համայնքային արխիվ հանձնելը կամ ոչնչացնելը:

Այս գործառույթի կատարման ապահովման նպատակով՝ համայնքների ՏԻՄ-երին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն**, որ համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացնելու համար **պետք է** համայնքների տարեկան բյուջեներում նախատեսվեն անհրաժեշտ միջոցներ:

3.3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

«Համայնքային արխիվ» ՀՈԱԿ ստեղծելու հնարավորության բացակայության և ոչ նպատակահարմարության դեպքում համայնքների ՏԻՄ-երին **առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն**, որ համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշումը **պարտադիր է**:

Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս համայնքների ղեկավարներին, **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝** Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերն ընդգրկվում են փորձաքննության հիման վրա՝ ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ն որոշմամբ² սահմանած պահպանության ժամկետների նշումով՝ արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկին համապատասխան **միայն՝ մշտական պահպանության փաստաթղթերը**:

Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևը ներկայացված է **հավելված 4-ում**:

² Տե՛ս <https://www.arlis.am>

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն.

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում ստեղծվել են (առաջացել են այդ արխիվային փաստաթղթերը).
- արխիվի անվանումը *(նշվում է համայնքապետարանի աշխատակազմի արխիվ, համայնքային այլ հիմնարկների և կազմակերպությունների արխիվներ եթե այդպիսիք կան)* որտեղ պահպանվել են այդ արխիվային փաստաթղթերը.
- պետական սեփականության փոխանցվող փաստաթղթերի տեսակները, տարեթվերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Նախքան համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշման ընդունումը համայնքապետարանի աշխատակազմը, համայնքային հիմնարկները և կազմակերպությունները պետք է իրականացնեն փաստաթղթերի կարգավորման աշխատանքներ, փաստաթղթերի՝ գործավարությամբ ավարտվելու տարվան հաջորդող երկրորդ տարվա ընթացքում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցումը իրականացվում է այդ փաստաթղթերը ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 1406-Ն որոշմամբ³ ստեղծված և որոշման N 3 և N 4 հավելվածների ցանկերով ՀՀ մարզերում գործող «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի ըստ սպասարկման տարածքների մասնաճյուղերին, տարածքային ներկայացուցչություններին հանձնելու միջոցով:

3.4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

³ Տե՛ս <https://www.arlis.am>

Փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման և կարգավորման աշխատանքները կազմակերպելու համար համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում և համայնքային արխիվներում ստեղծվում են հիմնարկի, կազմակերպության ղեկավարին առընթեր փորձագիտական հանձնաժողովներ (այսուհետ՝ ՓՀ), որոնք համագործակցում են պետական կամ համայնքային արխիվների հետ:

Համայնքապետարանի աշխատակազմի ՓՀ ստեղծելու համայնքի ղեկավարի կարգադրության նախագծի օրինակելի ձևը ներկայացված է **հավելված 5-ում**:

Հաշվի առնելով, որ ՀՀ գործող օրենսդրությամբ չկա սահմանված համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ՓՀ-ների օրինակելի կանոնակարգի հաստատման վերաբերյալ դրույթ, համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, ՓՀ-ների անդամներին **առաջարկվում է ղեկավարվել** ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մարտի 13-ի N 03-Ն հրամանի N 1 հավելվածով պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների ՓՀ-ների համար սահմանված օրինակելի կանոնակարգի իրավակարգավորումներով:

ՓՀ-ի հիմնական խնդիրներն են հանդիսանալու՝

- ⇒ հիմնարկում, կազմակերպությունում մշակված կամ կարծիք ներկայացնելու համար ստացված արխիվային գործի բնագավառին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկում և դրանց վերաբերյալ կարծիքների ու առաջարկությունների տրամադրումը.
- ⇒ հիմնարկում, կազմակերպության գործունեությամբ առաջացած փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման աշխատանքների կազմակերպումը և «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը պետական կամ համայնքային արխիվներին հանձնումը:

ՓՀ-ներն իրավասու են.

1) քննարկել և եզրակացություն տալ՝

ա. հիմնարկի, կազմակերպության գործունեությամբ առաջացած փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկին,

- բ. հիմնարկի, կազմակերպության յուրաքանչյուր տարվա գործերի անվանացանկին,
 - գ. փաստաթղթերի պահպանության ժամկետների կամ դրանց փոփոխման վերաբերյալ առաջարկություններին,
 - դ. մշտական պահպանության գործերի ցուցակներին,
 - ե. անձնակազմին վերաբերող գործերի ցուցակներին,
 - զ. երկարաժամկետ պահպանության գործերի ցուցակներին,
 - է. պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի գործերի առանձնացման մասին ակտերին.
- 2) կազմակերպել մասնագիտական խորհրդատվություններ՝ հիմնարկում, կազմակերպությունում արխիվային գործին առնչվող աշխատակիցների համար.
- 3) իր նիստերում լսել հիմնարկի, կազմակերպության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաղորդումները փաստաթղթերն արխիվային պահպանության հանձնելու և փաստաթղթերի արխիվացմանն առնչվող այլ հարցերի մասին.
- 4) փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման աշխատանքների կազմակերպման ժամանակ, անհրաժեշտության դեպքում, պետական կամ համայնքային արխիվից հրավիրել համապատասխան մասնագետների.
- 5) հիմնարկի, կազմակերպության ղեկավարին ներկայացնել տեղեկատվություն փաստաթղթերի պահպանվածության վիճակի մասին.
- 6) ներկայացնել կազմակերպությունը լիազորած մարմնում, պետական և համայնքային արխիվներում:

3.5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ՓՀ-ների անդամներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝**

- արխիվային փաստաթղթերը ՀՀ արխիվային հավաքածուի կազմում ընդգրկվում են փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման որոշակի չափանիշների՝ փաստաթղթերի պահպանության ժամկետները որոշելու և մշտական պահպանության համար առանձնացնելու նպատակով դրանց ուսումնասիրության հիման վրա:

- ՀՀ արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերն ընդգրկվում են համաձայն փաստաթղթերի՝

1) ծագման՝ փաստաթուղթ ստեղծող համալրման աղբյուրի պետական կառավարման համակարգում կամ որոշակի բնագավառում ունեցած դերի և տեղի, նրա իրականացրած գործառնությունների նշանակության, փաստաթղթի ստեղծման ժամանակի ու վայրի, անձնական ծագում ունեցող փաստաթղթերի դեպքում՝ հասարակական կյանքում ֆիզիկական անձի կարևորության,

2) բովանդակության՝ փաստաթղթում արտացոլված իրադարձության (երևույթի) նշանակության, դրանում արտացոլված տեղեկության կարևորության, փաստաթղթի տեսակի (տարատեսակի), իսկության (ստորագրությունների, կնիքների, թվագրման և այլ անհրաժեշտ վավերապայմանների առկայության),

3) արտաքին առանձնահատկությունների՝ փաստաթղթի բովանդակության գրառման և հաղորդման ձևի, վավերացման ու ձևակերպման եղանակի (այդ թվում՝ փաստաթղթի գեղարվեստական, հնագրագիտական, լեզվական և այլ առանձնահատկությունների), ֆիզիկական վիճակի չափանիշների համալիր կիրարկման հիման վրա:

Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում փաստաթղթերն ընդգրկվում են նաև դրանց տեսակների կամ խմբերի ընտրովի համալրման ձևով:

- Փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում դրանց ընդգրկման, ինչպես նաև վերջինիս կազմում առկա առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթղթերի ճանաչման հետ կապված գիտամեթոդական հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է պետական արխիվի մեթոդական-փորձագիտական հանձնաժողովը (այսուհետ՝ ՄՓՀ)՝ տնօրենի հաստատմամբ:

- Փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորվում են՝

1) հիմնարկի, կազմակերպության գործավարությունում՝ գործերի անվանացանկը կազմելիս, գործերը ձևավորելիս, դրանք կազմակերպության արխիվ պահպանության հանձնելու նախապատրաստելիս.

2) հիմնարկի, կազմակերպության արխիվում՝ փաստաթղթերը պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելու նախապատրաստելիս.

3) պետական և համայնքային արխիվներում՝ չկարգավորված փաստաթղթերը գիտատեխնիկական մշակման ենթարկելիս, մեծ թվով կրկնօրինակ և գիտական ու գործնական արժեք չունեցող փաստաթղթեր պարունակող ֆոնդերն ու ցուցակները վերամշակելիս:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝** փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորվում են **ամեն տարի՝** համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվային գործի մասնագետների կողմից կամ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ պետական կամ համայնքային արխիվների կողմից կամ նրանց մեթոդական աջակցությամբ:

- Փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման արդյունքում կազմվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված մշտական (N 1 ձև) և երկարաժամկետ (N 2 ձև) պահպանության ու անձնակազմին վերաբերող (N 3 ձև) գործերի ցուցակներ, ինչպես նաև պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտ (N 4 ձև):

- Հիմնարկի, կազմակերպության ՓՀ-ի կողմից մշտական և երկարաժամկետ պահպանության ու անձնակազմին վերաբերող գործերի ցուցակները հավանության արժանանալուց հետո ներկայացվում են պետական կամ համայնքային արխիվ, որի ՄՓՀ-ի կամ ՓՀ-ի կողմից մշտական պահպանության ենթակա գործերի ցուցակը

հաստատվելուց, երկարաժամկետ պահպանության ենթակա և անձնակազմին վերաբերող գործերի ցուցակները հավանության արժանանալուց հետո հաստատվում են հիմնարկի, կազմակերպության ղեկավարի կողմից:

- Համապատասխան արխիվի ՄՓՀ-ի կամ ՓՀ-ի կողմից մշտական պահպանության ենթակա գործերի ցուցակը չհաստատվելու կամ երկարաժամկետ պահպանության ենթակա և անձնակազմին վերաբերող գործերի ցուցակները հավանության չարժանանալու դեպքում դրանց պատճառների մասին գրավոր տեղյակ է պահվում հիմնարկին, կազմակերպությանը, որը պարտավոր է վերացնել տեղ գտած թերությունները և գործերի ցուցակները կրկին ներկայացնել պետական կամ համայնքային արխիվ:

- Մշտական պահպանության ենթակա գործերի ցուցակի հաստատումից հետո այդ գործերն ընդգրկված են համարվում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում, որի մասին հաշվառման փաստաթղթերում կատարվում են համապատասխան գրառումներ:

- Համայնքային հիմնարկը և կազմակերպությունն իրավունք ունի ոչնչացնելու պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտում ընդգրկված փաստաթղթերը (գործերը)՝ մշտական պահպանության ենթակա գործերի ցուցակի հաստատումից հետո:

- Պահպանության ժամկետը լրացած և պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտում ընդգրկված՝ թղթե կրիչով փաստաթղթերը (գործերը) ոչնչացվում են՝ այրման կամ վերամշակման միջոցով, որի մասին կազմվում է համապատասխան ակտ:

- Փաստաթղթերի ոչնչացումն արգելվում է, եթե դրանք փորձաքննությամբ չեն արժեքավորվել:

- Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների կողմից վերամշակման հանձնելու դիմաց ստացված միջոցները փոխանցվում են՝ համապատասխան համայնքի բյուջե («Բյուջետային հիմնարկների հաշվեկշռում հաշվառված հիմնական միջոց չհանդիսացող գույքի օտարումից մուտքեր» հաշվին):

3.6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ՓՀ-ների անդամներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝**

- Էլեկտրոնային փաստաթղթերը համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում փորձաքննությամբ արժեքավորվում են սույն Ուղեցույցում ներկայացված թղթե կրիչով փաստաթղթերի համար նախատեսված պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով հետևյալ լրացուցիչ հատկանիշները՝

- 1) Էլեկտրոնային փաստաթղթի իսկությունը, Էլեկտրոնային ստորագրության առկայությունը և դրա ստուգման դրական արդյունքը.

- 2) Էլեկտրոնային փաստաթղթերի տեղեկության վերարտադրման և մշակման հնարավորությունը՝ առանց դրանց ստեղծման ծրագրի օգտագործման.

- 3) Երկարաժամկետ (ավելի քան 10 տարի) պահպանության ապահովման և տեխնոլոգիական տեղափոխման իրականացման հնարավորությունը:

- Փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորման արդյունքում կազմվում են ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված մշտական (N 1 ձև) և երկարաժամկետ (N 2 ձև) պահպանության ու անձնակազմին վերաբերող (N 3 ձև) գործերի ցուցակներ, ինչպես նաև պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի (գործերի) առանձնացման մասին ակտ (N 4 ձև):

- Հիմնարկների, կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում Էլեկտրոնային փաստաթղթերի պահպանության ժամկետները լրանալուց հետո ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան իրականացվում է դրանց փորձաքննությամբ արժեքավորումը՝ մշտական ու երկարաժամկետ պահպանության Էլեկտրոնային փաստաթղթերի ցուցակները (N 36 ձև) և պահպանության ժամկետները լրացած,

ոչնչացման ենթակա էլեկտրոնային փաստաթղթերն առանձնացնելու մասին ակտերը (N 37 ձև) կազմելու նպատակով:

- Ոչնչացման ենթակա էլեկտրոնային փաստաթղթերի առանձնացման մասին ակտերը հաստատվում են՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված թղթե կրիչով փաստաթղթերի համար նախատեսված պահանջներին համապատասխան:

- Պահպանության ժամկետները լրացած էլեկտրոնային գործերը ենթակա են ֆիզիկական ոչնչացման կամ ծրագրային-տեխնիկական միջոցներով հեռացման՝ հիմնարկների, կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում արձանագրելով դրանց ոչնչացման փաստը:

- Հիմնարկների, կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում էլեկտրոնային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելիս՝

- 1) իրականացվում է հիմնարկների, կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում գտնվող մշտական ու երկարաժամկետ պահպանության ենթակա, աշխատանքների կատարումն ավարտված էլեկտրոնային փաստաթղթի ընտրություն՝ արխիվ հանձնելու նախապատրաստման համար.

- 2) ստուգում է էլեկտրոնային փաստաթղթերի պահպանման միավորների ձևավորման ճշգրտությունը և համակարգումը.

- 3) ստուգում է էլեկտրոնային փաստաթղթերի ֆայլերում համակարգչային վնասաբեր ծրագրերի առկայությունը:

3.7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ (ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ)

Համաձայն «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորումը, նախապատրաստումը և պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնումը:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ**

- Փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) աշխատանքներն իրականացվում են դրանց՝ **գործավարությամբ ավարտվելու տարվան հաջորդող երկրորդ տարվա ընթացքում:**

- Փաստաթղթերի կարգավորման աշխատանքները կազմակերպում է համայնքային հիմնարկի, կազմակերպության ղեկավարին առընթեր ստեղծված ՓՀ-ն՝ համագործակցելով պետական կամ համայնքային արխիվի հետ:

- Փաստաթղթերի կարգավորման աշխատանքների ամբողջ համալիրը բաժանվում է կազմակերպական-նախապատրաստական և եզրափակիչ աշխատանքների իրականացման փուլերի:

- Փաստաթղթերի կարգավորման կազմակերպական-նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) հիմնարկի, կազմակերպության պատմության և փաստաթղթերի առկայության ու ֆիզիկական վիճակի ուսումնասիրում.

2) պատմական տեղեկանքի կազմում.

3) կարգավորման ենթակա փաստաթղթերի և գործերի համակարգման ուրվագծի կազմում:

- Փաստաթղթերի կարգավորման եզրափակիչ փուլում հաջորդաբար իրականացվում են՝

1) հիմնարկի, կազմակերպության գործունեությամբ առաջացած՝ կարգավորման ենթակա փաստաթղթերի կենտրոնացում, ըստ կառուցվածքային ստորաբաժանումների (տեսակների, ուղղությունների) համակարգում, ամբողջականության ստուգում, փորձաքննությամբ արժեքավորում և ըստ պահպանության ժամկետների առանձնացում.

2) գործերի անվանացանկին համապատասխան՝ գործերի ձևավորում, գործերի մեջ փաստաթղթերի խմբավորում՝ անվանական, հեղինակային, հարցային-թեմատիկ-առարկայական, ժամանակագրական, աշխարհագրական և այլ հատկանիշների հիման վրա: Գործը պետք է պարունակի ոչ ավելի, քան 200 թերթ.

3) աշխատանքային քարտերի (թերթիկների) վրա մշտական և երկարաժամկետ պահպանության ենթակա ու անձնակազմին վերաբերող գործերի նկարագրում (վերնագրի կազմում, ծայրային տարեթվերի, թերթերի թվի նշում) և նկարագրական հոդվածների խմբագրում.

4) աշխատանքային քարտերի՝ փաստաթղթերի և գործերի համակարգման ուրվագծին համապատասխան նիշավորում.

5) պահպանության առանձնացված գործերի ցուցակների կազմում՝ մշտական պահպանության համար՝ 4 օրինակից, անձնակազմին վերաբերող՝ 3 օրինակից, երկարաժամկետ պահպանության համար՝ 2 օրինակից.

6) մշտական և երկարաժամկետ պահպանության ենթակա ու անձնակազմին վերաբերող գործերի թերթերի համարակալում, վավերացման թերթիկի կազմում, անհրաժեշտության դեպքում՝ փաստաթղթերի ներքին ցուցակի կազմում, շապիկների (կազմերի) ձևավորում և նիշավորում, կազմապատում կամ կարում.

7) գործերի կազմապատում կամ կարում՝ փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելուց հետո.

8) պահպանության ոչ ենթակա գործերի ու փաստաթղթերի խմբավորում (ըստ տեսակների, պահպանության ժամկետների) և դրանց ոչնչացման համար առանձնացման մասին ակտի կազմում:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ** համայնքային հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի կարգավորումը (գիտատեխնիկական մշակումը) **կարող են** իրականացնել նաև պայմանագրային հիմունքներով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ համայնքային հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման միջոցով՝ գնման պայմանագիր կնքելով պետական կամ համայնքային արխիվների կամ արխիվային փաստաթղթերի կարգավորման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռներեցների հետ:

Համայնքապետարանի կարիքների համար արխիվային փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագրի նախագծի օրինակելի ձևը ներկայացված է **հավելված 6-ում**:

3.8. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ (ՄԻՆՉԵՎ ՄՇԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼԸ) ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ համայնքային արխիվներում.

2) ժամանակավոր պահպանություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում՝ օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

Համայնքների ՏԻՄ-երին **առաջարկվում է ընդունել ի գիտություն**, որ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ **չունենալու դեպքում՝**

- համայնքային սեփականություն համարվող մշտական պահպանության արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, համայնքի ղեկավարը պետք է իրականացնի արխիվային փաստաթղթերը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնելու գործընթաց, ՀՀ գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան, ապահովելով՝ փաստաթղթերը պետական պահպանության կամ պահպանությամբ պահպանության հանձնման նախապատրաստումը և տեղափոխումը ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 1406-Ն որոշմամբ ստեղծված և որոշման N 3 և N 4 հավելվածների ցանկերով ՀՀ մարզերում գործող «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի ըստ սպասարկման տարածքների մասնաճյուղեր կամ տարածքային ներկայացուցչություններ:
- Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող մշտական պահպանության փաստաթղթերը **կարող են** նաև պահպանությամբ պահպանության հանձնվել պետական արխիվ՝ համապատասխան պայմանագրով սահմանված որոշակի ժամկետում և պայմաններով:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին, համայնքապետարանի աշխատակազմում արխիվային գործի վարման բնագավառում գործառույթներ

իրականացնող համայնքային ծառայողներին, համայնքային հիմնարկներին և կազմակերպությունների ղեկավարներին **ընդունել ի գիտություն**, որ՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերը տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում ժամանակավոր (մինչև պետական և համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու **առավելագույն ժամկետներն են՝**

- տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար՝ 5 տարի,
- սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված արխիվային փաստաթղթերի առանձին տեսակների՝
 - ✓ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար՝ 100 տարի,
 - ✓ համայնքների գրքեր՝ մինչև սահմանված կարգով նորը կազմելը,
 - ✓ իրականացված կապիտալ շինարարության նախագծային փաստաթղթերի համար՝ 20 տարի,
 - ✓ արտոնագրված տեխնոլոգիական և փորձարարական ստրուկտուրական փաստաթղթերի համար՝ 20 տարի,
 - ✓ գիտահետազոտական և արտոնագրային փաստաթղթերի համար՝ 15 տարի:

Օրենսդրությամբ համայնքի ՏԻՄ-երին, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին արխիվային գործի կազմակերպման և վարման բնագավառում վերապահված են նաև այլ լիազորություններ և գործառույթներ, որոնք սահմանված են ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն, 2019 թվականի ապրիլի 4-ի N 397-Ն որոշումներով և այլ իրավական ակտերով:

3.9. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-Ի, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ

ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի

- 10-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի՝ ՀՀ համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարի տեսակ՝ **համայնքապետարանի աշխատակազմի արխիվից** փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.
- 14-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի՝ ՀՀ համայնքներում համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարի դրույքաչափը փոխհատուցման վճարն է:
- 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ սահմանելով սույն օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը:

Ելնելով օրենսդրական վերոնշյալ իրավակարգավորումներից և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից համայնքների ՏԻՄ-երին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ** համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից համայնքի տեղական տուրքերի՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման մեջ կարող են ընդգրկվել նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի տեղական վճարների տեսակների մեջ **չներառված տեղական վճարների նոր տեսակներ** (օրինակ՝ արխիվային տեղեկանքների, արխիվային փաստաթղթերի պատճենների տրամադրում, ֆիզիկական և իրավաբանական անձանց արխիվային ծառայությունների մատուցում և այլն) և դրանց դրույքաչափերը:

Համայնքների ղեկավարներին, «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն, որ՝**

- «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվների կողմից ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին,

քաղաքացիություն չունեցող անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին, իրավաբանական անձանց տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը պետք է իրականացնել ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1204-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված կարգին⁴ համապատասխան:

- Արխիվային փաստաթղթերի մատչելիության սահմանափակումները պետք է իրականացնել միայն «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Համայնքների ղեկավարներին, առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող արխիվային ծառայությունների դիմաց վճարման կարգը հաստատում է համայնքի ղեկավարը:

3.10. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները և կազմակերպությունները, նոտարները, նոտարական պալատը, որոնց գործունեության ընթացքում առաջանում են պետական և համայնքային արխիվներում պահպանության ենթակա Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթեր և արխիվային այլ փաստաթղթեր, պետական և համայնքային արխիվների համալրման աղբյուրներ են:

Նույն հոդվածով սահմանված է, որ պետական և համայնքային արխիվները կազմում են իրենց համալրման աղբյուրների ցանկերը, իրավաբանական և ֆիզիկական անձինք պետական և համայնքային արխիվների համալրման աղբյուրներ են համարվում պայմանագրի հիման վրա:

⁴ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=101115>

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով սահմանված է, որ՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ արխիվային փաստաթղթերով մշտապես (պարբերաբար) համալրումը ներառում է՝

1) պետական և համայնքային արխիվների կողմից իրենց համալրման աղբյուրների ցանկերի կազմումը.

2) պետական և համայնքային արխիվներ պահպանության ընդունման ենթակա փաստաթղթերի կազմի սահմանումը.

3) արխիվային փաստաթղթերը պետական և համայնքային արխիվներ պահպանության հանձնում-ընդունումը:

Նույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝

- տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ընդգրկվում են համայնքային արխիվների համալրման աղբյուրների ցանկում:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպությունները կարող են դառնալ պետական արխիվի համալրման աղբյուրներ:
- Այլ իրավաբանական և ֆիզիկական անձինք պետական կամ համայնքային արխիվների համալրման աղբյուրների ցանկում ընդգրկվում են պայմանագրի հիման վրա:
- Պետական և համայնքային արխիվների համալրման աղբյուրների ցանկում կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ընդգրկումն իրականացվում է՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

1) պետական և համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների, այլ իրավաբանական անձանց համար՝

ա. կազմակերպության գործառույթային-նպատակային նշանակությունը (նմանօրինակ գործառույթներ իրականացնող կազմակերպությունների խմբի համար օգտագործվում է ընտրովի համալրման ձևը),

բ. այլ կազմակերպությունների արխիվային ֆոնդերում տվյալ կազմակերպության գործունեության մասին տեղեկության արտացոլման լիակատարությունը.

2) ֆիզիկական անձանց համար՝

ա. գիտության, մշակույթի և գործունեության այլ բնագավառների զարգացման գործում ունեցած ներդրումը,

բ. որպես հասարակության կյանքում տեղի ունեցած նշանակալից իրադարձության ականատեսի կամ մասնակցի՝ նրա դերն ու ազդեցությունը,

գ. ֆիզիկական անձի ազգակցական, բարեկամական, ստեղծագործական կապերը, աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը,

դ. դարաշրջանի համար նրա արխիվային փաստաթղթերի տիպականությունը,

ե. ֆիզիկական անձի կողմից հավաքված արխիվային փաստաթղթերի կազմն ու բովանդակությունը:

Նույն կարգի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝

- Համայնքային արխիվների համալրման աղբյուրների ցանկը հաստատում և դրանում փոփոխությունները կատարում է **համայնքի ղեկավարը**:
- Պետական և **համայնքային** արխիվները **յուրաքանչյուր** համալրման աղբյուրի համար վարում են **դիտարկման գործ**, որտեղ ներառվում են տվյալ աղբյուրի իրավական կարգավիճակը և գործառույթները բնութագրող փաստաթղթերը: Ֆիզիկական անձի դեպքում դիտարկման գործում ներառվում են տեղեկություններ նրա արխիվային փաստաթղթերի կազմի ու բովանդակության մասին:

3.11. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-Ի, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն, որ՝** «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին արխիվներում արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի) **համալրման աշխատանքները պետք է կազմակերպվեն** «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության

արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-10-րդ, 44-45-րդ, 220-221-րդ կետերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

3.12. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-Ի, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին ղեկավարներին առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն, որ՝ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին արխիվներում արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի) հաշվառման աշխատանքները պետք է կազմակերպվեն «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ, 45-130-րդ, 143-144-րդ, 146-147-րդ, 165-րդ, 172-173-րդ, 189-րդ, 208-րդ, 213-րդ, 229-րդ, 246-249-րդ, 252-255-րդ, 267-րդ կետերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

3.13. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-Ի, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկներին և կազմակերպություններին ղեկավարներին առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝ «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկներին և

կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի) **պահպանության աշխատանքները պետք է կազմակերպվեն** «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի **4-5-րդ, 7-8-րդ, 11-րդ, 14-րդ, 19-24-րդ, 30-31-րդ, 33-րդ, 37-րդ, 39-րդ, 41-49-րդ, 51-րդ, 54-56-րդ, 59-61-րդ, 63-րդ, 65-րդ, 67-68-րդ, 71-րդ, 73-74-րդ, 76-77-րդ, 79-88-րդ, 90-91-րդ, 93-րդ, 95-103-րդ, 105-108-րդ, 110-րդ, 114-121-րդ, 123-րդ, 126-127-րդ, 131-րդ, 133-135-րդ, 139-143-րդ, 149-151-րդ, 154-156-րդ, 160-րդ, 164-րդ, 173-րդ, 176-177-րդ, 180-183-րդ, 186-187-րդ, 191-րդ, 196-197-րդ, 212-րդ, 218-223-րդ, 225-226-րդ, 228-229-րդ, 231-րդ, 233-րդ, 236-րդ, 242-րդ, 256-257-րդ, 261-րդ, 263-րդ, 266-րդ** կետերով և ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

3.14. ՓԱՍՏԱԹՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ

Համայնքային հիմնարկների (այդ թվում՝ համայնքապետարանների աշխատակազմերի) ու կազմակերպությունների արխիվներում փաստաթղթերը պահպանվում են այդ նպատակով կահավորված արխիվապահոցում՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը

կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 132-149-րդ կետերով՝ պետական արխիվի համար նախատեսված պայմաններին համապատասխան:

Համայնքային արխիվների, համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների արխիվների արխիվապահոցի կանոնակարգը, պահպանության պայմանակարգը (ռեժիմը) և փաստաթղթերի տեղաբաշխման կառուցվածքը սահմանում են համայնքների ղեկավարները:

Համայնքային արխիվների, համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների արխիվների արխիվապահոցի կանոնակարգը, պահպանության պայմանակարգը (ռեժիմը) և փաստաթղթերի տեղաբաշխման կառուցվածքը սահմանելիս՝ համայնքների ղեկավարներին **առաջարկվում է ղեկավարվել՝** ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մարտի 13-ի «Պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների փորձագիտական հանձնաժողովների և արխիվների օրինակելի կանոնակարգերը հաստատելու մասին» N 03-Ն հրամանի N 2 հավելվածով պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների արխիվների համար սահմանված օրինակելի կանոնակարգի իրավակարգավորումներով:

3.15. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ-Ի, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝** «Համայնքային արխիվ» ՀՈԱԿ-ի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների արխիվներում արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի) **օգտագործման աշխատանքները պետք է կազմակերպվեն** «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 21-23-րդ հոդվածների, ՀՀ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և

օգտագործման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 884-Ն որոշմամբ հաստատված կարգի 54-55-րդ, 60-61-րդ, 65-րդ, 107-րդ, 115-116-րդ, 118-րդ, 122-124-րդ, 126-127-րդ, 142-րդ, 146-րդ, 166-րդ, 168-169-րդ, 172-րդ, 176-րդ, 184-185-րդ, 190-191-րդ, 193-194-րդ, 196-րդ, 199-րդ, 202-րդ, 204-րդ, 207-րդ, 222-րդ, 231-րդ, 241-րդ, 245-րդ, 264-րդ, 269-րդ կետերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

3.16. ԼՈՒԾԱՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՆԵՐԻ ԵՎ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների լուծարման դեպքում Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերը (ներառյալ՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը անձնակազմին վերաբերող) հանձնվում են պետական կամ համայնքային արխիվներ:

2015-2023 թվականների ընթացքում միավորված համայնքների կազմում ներառված նախկին համայնքների աշխատակազմերի, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունը համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքները որպես պետական սեփականություն չեն փոխանցվել, ներկայիս միավորված համայնքների համայնքապետարանների (այդ թվում՝ համայնքի կազմում ներառված բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքային ծառայողների) կողմից այդ փաստաթղթերում առկա տեղեկատվության տիրապետման, օգտագործման և բնակավայրերի բնակիչներին ավելի հասանելի, ժամանակի խնայողության ծառայություններ մատուցելու հիմնավորմամբ:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ի ղեկավարումն ընդունել**, որ արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրենք **պարտավոր են** ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այդ արխիվային

փաստաթղթերը պետական կամ համայնքային արխիվներ (առկայության դեպքում) հանձնում-ընդունումը կազմակերպելու համար:

Այս առումով, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերն ու գործողությունները՝

1. ուսումնասիրել համայնքի կազմում ներառված նախկին համայնքների աշխատակազմերի կողմից միավորված համայնքի համայնքապետարանին փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտերը, պարզելու համար փաստաթղթերի հանձնման ամբողջականությունը և գտնվելու վայրը,

2. մարզային արխիվների, տարածքային ներկայացուցչությունների (ըստ սպասարկման տարածքների) հետ ճշտել 2015 թվականից հետո իրենց հանձնված նախկին համայնքների աշխատակազմերի, համայնքային այլ հիմնարկների և կազմակերպությունների փաստաթղթերի տեսակները և տարեթվերը,

3. մարզային արխիվներ, տարածքային ներկայացուցչություններ, ինչպես նաև համայնքների միավորումից հետո համայնքապետարանին չհանձնված փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում ճշտել չհանձնելու պատճառները և ի պաշտոնե պատասխանատու պաշոնատար անձանց, ձեռնարկելով փաստաթղթերը հայտնաբերելու օրենսդրությամբ նախատեսված միջոցներ,

4. իրականացնել միավորված համայնքապետարանի աշխատակազմ հանձնված, վարչական ղեկավարների նստավայրերում գտնվող նախկին համայնքների աշխատակազմերի, համայնքային այլ հիմնարկների և կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի **սկանավորում** էլեկտրոնային պատճենների ստեղծմամբ՝ սկաներների միջոցով,

5. արխիվային փաստաթղթերի սկանավորված էլեկտրոնային պատճենները պահպանել համայնքապետարանի աշխատակազմում և վարչական ղեկավարների նստավայրերում:

6. արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արխիվային փաստաթղթերը հանձնել պետական կամ համայնքային արխիվներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարար 2006 թվականի նոյեմբերի 7-ի «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգը սահմանելու մասին» N 20-Ն հրամանի

հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձի անձնական գործը (բացառությամբ աշխատանքային գրքույկի) առնվազն հինգ տարի պահպանվում է համապատասխան աշխատակազմում, որից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է արխիվ, իսկ այլ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմում համայնքային ծառայության նոր պաշտոնում նշանակվելու դեպքում՝ տվյալ համապատասխան մարմին:

3.17. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

Համայնքային արխիվն իր համալրման աղբյուրների հետ համատեղ քննարկում և, իրեն վերապահված լիազորություններին համապատասխան, համաձայնեցնում է գործավարության վերաբերյալ հրահանգները, գործերի օրինակելի ու անհատական անվանացանկերը, փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկերը, ՓՀ-ների ու արխիվների կանոնակարգերը: Համայնքային արխիվի ներկայացուցիչն անդամի կարգավիճակով մասնակցում է համալրման աղբյուրների ՓՀ-ների աշխատանքին:

Համայնքների ղեկավարներին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝** պետական արխիվն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում համագործակցում է համալրման աղբյուրների գործավարական և արխիվային ծառայությունների ու ՓՀ-ների հետ: Այդ նպատակով պետական արխիվն իրականացնում է (նաև՝ պայմանագրային հիմունքներով) մեթոդական և գործնական աջակցություն՝

- 1) գործավարությունում փաստաթղթերի կազմակերպման և գործերի ձևավորման,
- 2) Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ներառելու համար փաստաթղթերի առանձնացման և մշտական պահպանության հանձնման համար դրանց նախապատրաստման,
- 3) անձնակազմին վերաբերող փաստաթղթերի կարգավորման,
- 4) Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի ժամանակավոր պահպանության փաստաթղթերի հաշվառման,

5) գործավարության և արխիվային գործի վերաբերյալ նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի պատրաստման,

6) համալրման աղբյուրների համապատասխան ծառայությունների աշխատանքների կատարելագործման և այդ ծառայությունների աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման հետ կապված հարցերում:

3.18. ՄԻԱՎՈՐՎԱԾ (ԽՈՇՈՐԱՑՎԱԾ) ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքապետարանի աշխատակազմի արխիվային գործի վարումը ապահովում է աշխատակազմի քարտուղարը: Քանի որ միավորված (խոշորացված) համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերում աշխատող համայնքային ծառայողները աշխատակազմի մաս են կազմում, ապա աշխատակազմի քարտուղարը իր հրամանով բնակավայրերում արխիվային գործի վարման ապահովման գործառույթը վերապահում է համայնքային ծառայող(ներ)ին, եթե համայնքի ղեկավարի կողմից հաստատված համայնքային ծառայող(ներ)ի պաշտոն(ներ)ի անձնագր(եր)ում այդ գործառույթի իրականացումը չի նախատեսվել:

Միավորված (խոշորացված) համայնքների բնակավայրերում գործող համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարումն իրականացվում է սույն Ուղեցույցում ներկայացված ընդհանուր իրավակարգավորումներին համապատասխան:

3.19. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համայնքապետարանի աշխատակազմում արխիվային գործի վարման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացման կարևոր բաղադրիչ է հանդիսանում արխիվային գործի վարման բնագավառում

գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում իրենց գործառույթների վերաբերյալ իրավակարգավորումները:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին, համայնքապետարանի աշխատակազմում բացի աշխատակազմի քարտուղարից արխիվային գործի վարման գործընթացների իրականացումը վերապահել այդ բնագավառում գործառույթներ իրականացնող բաժնի (բաժնի պետ, բաժնի պետի տեղակալ, բաժնի գլխավոր, առաջատար, առաջին և երկրորդ կարգի մասնագետներ) համայնքային ծառայողներին, այդպիսին չունենալու դեպքում՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին (աշխատակազմի գլխավոր, առաջատար, առաջին և երկրորդ կարգի մասնագետներ), միաժամանակ, հաստատելով այդ պաշտոն(ներ)ի նոր անձնագր(եր)ը դրանցում սահմանելով արխիվային գործի վարման հետ կապված համապատասխան գործառույթները:

- **Համայնքների ղեկավարներին, առաջարկվում է ընդունել ի գիտություն,** որ՝ պաշտոն(ներ)ի անձնագր(եր)ում փոփոխությունը (փոփոխությունները) պետք է կատարել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 04-Ն հրամանով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա:
- Պարտադիր չէ արխիվային գործի վարման գործառույթները ամբողջությամբ սահմանել միայն մեկ համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրում:
- Արխիվային գործի վարման գործառույթները կամ այդ գործառույթների մի մասը կարող է իրականացվել նաև պայմանագրային հիմունքներով՝ քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց միջոցով՝ նրանց հետ կնքելով որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավակարգավորումներին համապատասխան:

- Պաշտոն(ներ)ի անձնագր(եր)ում արխիվային գործի վարման գործառույթները սահմանելիս պետք է հաշվի առնել տվյալ համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը և արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների հիմնական ֆունկցիոնալ պարտականությունների բաշխումը՝ ըստ համայնքային ծառայության պաշտոնների խմբի և ենթախմբի:

Համայնքապետարանի աշխատակազմում արխիվային գործի վարման գծով գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրի նախագծի օրինակելի ձևը ներկայացված է **հավելված 7-ում**:

Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ՝** համայնքային հիմնարկներում և կազմակերպություններում բացի իրենցից արխիվային գործի վարման համար այլ պաշտոնատար անձի (անձանց) համար պարտականությունների սահմանումը պետք է ձևակերպել իրավական ակտով (որոշում, կարգադրություն, հրաման):

**4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ԱՌԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ համայնքապետարանների աշխատակազմերում, համայնքային ենթակայության այլ հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի կազմակերպման և վարման առկա խնդիրներին լուծում տալու համար, համայնքների ՏԻՄ-երին, համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին **առաջարկվում է՝**

- համայնքապետարանների աշխատակազմերում, համայնքային ենթակայության այլ հիմնարկներում և կազմակերպություններում արխիվային գործի վարման պատասխանատու պաշտոնատար անձանց մասնագիտական հմտությունների և կարողությունների մակարդակը բարձրացնելու նպատակով՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի, տարածքային ներկայացուցչությունների հետ **քննարկել՝** համապատասխան համայնքի համար առանձին կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում՝ համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության այլ հիմնարկների և կազմակերպությունների արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների, պաշտոնատար անձանց վերապատրաստումները կազմակերպելու տարբերակների, հնարավորությունների և նպատակահարմարության հարցերը:
- այն համայնքապետարանների աշխատակազմերում, որտեղ արխիվային գործի վարման ապահովման գործառույթներ իրականացնում է միայն աշխատակազմի քարտուղարը, **քննարկել՝** այդ գործառույթները իրականացնելու համար առանձին համայնքային ծառայողի հաստիքային միավոր ունենալու հնարավորությունների և նպատակահարմարության հարցերը:
- **ապահովել՝** արխիվային գործի վարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում արխիվային գործի վարման գործառույթների ներառումը:

- միավորված համայնքապետարանի աշխատակազմի արխիվի արխիվապահոցի համար համապատասխան շենքային պայմանների, անհրաժեշտ գույքի բացակայության դեպքում, **քննարկել՝** համայնքի կազմում ընդգրկված այլ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում համայնքապետարանի աշխատակազմի արխիվի արխիվապահոց ունենալու հնարավորությունների և նպատակահարմարության հարցերը:
- եթե համայնքապետարանի աշխատակազմի կարողությունները չեն բավարարում համայնքապետարանի աշխատակազմի արխիվային փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) աշխատանքները իրականացնելու համար, ապա համայնքի տարեկան բյուջեն հաստատելիս **նախատեսել** համապատասխան ֆինանսական միջոցների ծախսեր՝ արխիվային փաստաթղթերի կարգավորման (գիտատեխնիկական մշակման) ծառայությունների ձեռքբերման համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ----- ՄԱՐԶԻ
----- ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության ----- մարզի
----- համայնք, հասցե՝ ----- ,
հեռախոս՝ ----- , էլ. փոստ՝ -----

ՈՐՈՇՈՒՄ

«--» ----- -ի 20-- թվականի N___-Ա

« ----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով և 11-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

----- **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետև՝ կազմակերպություն):
2. Հաստատել «----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Սահմանել, որ կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝
Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքային

սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունը, հաշվառումը, համալրումը և օգտագործումը:

4. Կազմակերպությունը համայնքի օրենքին կամ հիմնադրի (համայնքի ավագանու) որոշմանը համապատասխան, սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ արխիվային տեղեկանքների, արխիվային փաստաթղթերի կրկնօրինակի (պատճենի) տրամադրում, ֆիզիկական և իրավաբանական անձանց արխիվային ծառայությունների մատուցում:

5. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հետևյալ ուղղություններով՝

1) կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում.

2) կազմակերպության աշխատողների կենսաապահովման բարձրացում՝ պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ ձևերով.

3) կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերում.

4) կազմակերպության աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին.

5) լիազորված մարմնի կողմից և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ ուղղություններ:

6. Հաստատել կազմակերպությանը *(նշվում է սեփականության իրավունքով հիմնադրի կողմից հանձնվող և (կամ) ամրացվող, կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող) գույքի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:*

7. Կազմակերպության պետական գրանցման, կնիքների պատրաստման թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը հանձնված գույքի գրանցման համար օրենքով սահմանված վճարումներն իրականացնել համայնքի բյուջեից:

8. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ ի դեմս համայնքի ավագանու, հիմնադրի կողմից լիազորված մարմինը՝ ի դեմս համայնքի ղեկավարի և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

9. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառնություններն օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

_____	_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
_____	_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
_____	_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____

(անունը, ազգանունը)

20--թ. ----- « »

Բ. (Գ.) -----

(Գ. Տ.)

Հավելված N 1

----- համայնքի ավագանու

« -- » ----- ի 20__ թվականի

N-- -Ա որոշման

« ----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ »

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի պատմամշակութային ժառանգության՝ մաս համարվող համայնքային սեփականության արխիվային փաստաթղթերի պահպանության, հաշվառման, համալրման և օգտագործման գործունեություն իրականացնելու նպատակով:

Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Արխիվային գործի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գնումների մասին» օրենքներով, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպության հիմնադիրը ----- համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս ----- ի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ Հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդիսանում է ----- ի համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

Կազմակերպության գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենն է (այսուհետ՝ Տնօրեն):

4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված և Հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

6. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

7. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ «АРХИВ ----- ОБЩИНЫ» общинная некоммерческая организация կրճատ՝ «АРХИВ ----- ОБЩИНЫ» ОНКО

Անգլերեն լրիվ՝ «----- COMMUNITY ARCHIVE» community non commercial organization կրճատ՝ «----- COMMUNITY ARCHIVE» CNCO:

8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, -----
-----:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

9. Կազմակերպության առարկան և նպատակներն են՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքային սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունը, հաշվառումը, համալրումը և օգտագործումը:

10. Կազմակերպությունն իր գործունեության առարկային և նպատակներին համապատասխան՝

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի մաս կազմող համայնքային արխիվային փաստաթղթերի պահպանությունը, հաշվառումը, համալրումը և օգտագործումը.

2) սահմանված կարգով օգտագործում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի մաս կազմող համայնքային արխիվային հավաքածուն.

3) արխիվային գործի և գործավարության բնագավառում իրականացնում է համայնքային ծրագրեր.

4) կազմակերպում է համայնքապետարանի աշխատակազմից, համայնքային հիմնարկներից, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից ընդունված փաստաթղթերի արխիվացման ու պահպանության աշխատանքները.

5) ապահովում է քաղաքացիներից և իրավաբանական անձանց կողմից պահանջվող փաստաթղթերի պատճենների, կրկնօրինակների, ինչպես նաև արխիվային տեղեկանքների տրամադրումը.

6) համագործակցում է Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի (Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության), «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և նրա մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային

կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքային արխիվների հետ.

7) աջակցում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը համարվող արխիվների պահպանության գործին.

8) լիազորված պետական մարմինն և Հիմնադրին, Համայնքի ղեկավարին ներկայացնում է արխիվային գործի և գործավարության բնագավառում վարչական վիճակագրությունը.

9) պատրաստում և հրատարակում է համայնքային սեփականություն կազմող արխիվային փաստաթղթերի կազմի և բովանդակության վերաբերյալ տեղեկագրեր, ուսումնական ու գործնական ձեռնարկներ և այլն.

10) քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները), լուծում բարձրացված հարցերը.

11) իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը համարվող փաստաթղթերի փորձաքննությամբ արժեքավորում.

12) կազմում է իր համալրման աղբյուրների ցանկերը:

13) արխիվային գործի բնագավառում իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Տնօրենը:

12. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,

2) Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատումը,

3) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

4) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանվող տեղական վճարների նոր տեսակների և դրանց դրույքաչափերի սահմանումը,

5) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

6) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

7) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

8) կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը.

9) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

14. Համայնքի ղեկավարը իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

15. Համայնքի ղեկավարը՝

1) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ըստ անհրաժեշտության՝ հանդես է գալիս Հիմնադրի անունից,

2) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

4) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության և օգտագործման նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ

- կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
- 6) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- 7) հաստատում է Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությամբ իրականացվող արխիվային ծառայությունների դիմաց վճարման կարգը,
- 8) հաստատում է Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշիռը.
- 9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
16. Կազմակերպության գործադիր մարմինը.
- 1) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը: Կազմակերպության Տնօրենը ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, Համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
- 2) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը:
- 3) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
- 4) Տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից:
- 5) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:
- 6) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները,

կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

17. Տնօրենը՝

- 1) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր,
- 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- 3) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- 4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,
- 5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային),
- 6) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
- 7) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
- 8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 9) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,
- 10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

18. Տնօրենի բացակայության դեպքում, Համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

19. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրերով, կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

21. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

22. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

23. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

24. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

25. Սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքը (ներառյալ՝ անշարժ գույքը)՝ կարող է օտարվել (վաճառվել, նվիրվել, դուրս գրվել) կամ վարձակալությամբ տրվել միայն Հիմնադրի գրավոր համաձայնությամբ: Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքը հիմնադրի սեփականությունն է: Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

26. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հիմնադրի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի դեկավարի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել -- **տարվանից ավելի**՝ բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

27. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

28. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

29. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

30. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

31. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուր են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և Կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներն ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները:

32. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

33. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

34. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

35. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

36. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

37. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

38. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Համայնքի ղեկավարը:

39. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

40. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

41. Կազմակերպության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է համայնքի բյուջե:

42. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

43. Սույն կանոնադրությամբ չպարզաբանված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Տեղական ինքնակառավարման մասին», «Արխիվային գործի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին և գործող այլ իրավական ակտերին համապատասխան:

« ----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (նշվում է սեփականության իրավունքով հիմնադրի կողմից հանձնվող և (կամ) ամրացվող, կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող) **ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ**

Գույքային համարը	Գույքի անվանումը	Քանակը	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Համախառն հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)	Կուտակված մաշվածությունը (ՀՀ դրամ)	Հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)	Վիճակը

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**« ----- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար ժամանակավոր (մինչև պետական և համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետը 5 տարի է:

Համաձայն նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքային կազմակերպություններն ապահովում են Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորումը, նախապատրաստումը և պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնումը:

Ներկա դրությամբ ----- **համայնքում առկա -- համայնքային հիմնարկները,** համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները

իրենց տնօրինման տակ գտնվող արխիվային փաստաթղթերը, որոնք համարվում են համայնքային սեփականություն, համայնքային արխիվ չեն հանձնել համայնքային արխիվ չլինելու պատճառով, իսկ դրանք պետությանը որպես սեփականություն հանձնելու գործընթաց գրեթե չի իրականացվել՝ պատշաճ հսկողության բացակայության պատճառով:

(Ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված փաստաթղթերի կարգավորման (արխիվացման), նախապատրաստման ծառայությունների ձեռքբերման համար համայնքի և համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բյուջեներից տարեկան կտրվածքով՝ ծախսված գումարի չափի մասին, եթե եղել են այդպիսիք, ինչպես նաև՝ համայնքի բյուջեից « ----- համայնքային արխիվ » համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծման և տարեկան կտրվածքով՝ պահպանման համար ծախսվելիք գումարների չափերի մասին):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը:

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը արխիվային գործի ոլորտում, ըստ որի՝ համայնքի ավագանին կայացնում է որոշում համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին, ինչպես նաև որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն՝ համայնքի ղեկավարը՝

- 1) ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային արխիվ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման նախագիծը.
- 2) ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը օրենքում համայնքային արխիվ հասկացությունը սահմանված է, որպես՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որն ստեղծում է համայնքը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ համայնքը, իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքն ունի հողի, գույքի, ինչպես նաև գույքային այլ իրավունքների նկատմամբ սեփականության իրավունք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ համայնքի ավագանին է օրենքով սահմանված կարգով տնօրինում համայնքի սեփականությունը:

Օրենսդրական վերը մեջբերված կարգավորումների համատեքստում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերը ևս համարվում են համայնքի սեփականություն և համայնքի ավագանին է սահմանում դրանց կառավարման հետ կապված կարգավորումները, որոնց հիման վրա համայնքի ղեկավարը՝ (համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով) իրականացնում է իր լիազորությունները՝ կազմակերպելով համայնքի սեփականություն համարվող գույքի, այդ թվում՝ համայնքային արխիվի, համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի

համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման և տնօրինման վարչարարական և քաղաքացիաիրավական գործընթացները:

Այսպիսով, օրենսդրական վերը մեջբերված կարգավորումների շրջանակներում, համայնքի ղեկավարին վերապահված է պարտավորություն՝ կազմակերպելու համայնքի արխիվային գործի վարումը, իսկ համայնքի ավագանուն՝ համայնքային արխիվի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման որոշման ընդունումումը:

« ----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ----- համայնքի ավագանու որոշման նախագծի հավելվածներով ներկայացված են ավագանու որոշման նախագծի N 1 և N 2 հավելվածների օրինակելի ձևերը.

- «----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը.

- «----- համայնքային արխիվ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը *(սեփականության իրավունքով հիմնադրի կողմից հանձնվող և (կամ) ամրացվող, կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող)* գույքի կազմը:

